ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Ա. Հ.

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների տիեզերական պատկերացումները, որոնք կարևոր նշանակություն են ունեցել հոգևոր պաշտամունքի համար, իրենց արտացոլումն են գտել նաև բիայնական պետության արքայանուններում: Նրանց հիմքում ընկած է դեռևս ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում ձևավորված երկնային մարմինների, հատկապես արևի պաշտամունքը[1]: Ընդհանրապես հին Արևելքի երկրներում թագավորների անձի աստվածացումը սովորական երևույթ էր: Նրանց անվան կազմում սովորաբար հիշատակվել է Արևը՝ որպես գերագույն իշխանության խորհրդանիշ: Այս առումով բացառություն չէին կարող կազմել նաև բիայնական պետության թագավորների անունները: Բիայնական արքայատոհ-մի առաջին ներկայացուցիչ Aramu-*ն* (A-rama/Aramu/Arramu*)[2], կրել է հին հայոց Արևի աստված Արամի (=Արամ Նահապետ) անունը[3]: Ըստ հայոց ավանդական պատմության՝ «… անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք»[4]:*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արամ-ը եղել է «ուրարտական թագավորների» գահանունը, որից կազմված է նրանց Արամազն կամ Արամազնեայք (= հայ) տոհմանունը[5]: Հետևաբար, «…միջնադարյան հայ հեղինակների կողմից հայության ընկալումը՝ որպես Արամանեայն, Արամանեան, Արամազեան ազգ ունի որոշակի պատմական հիմք»[6]:

Ըստ հին հայոց հավատալիքների՝ լուսափայլ Արուսյակ մոլորակը, երևալով նախքան արեգակի ծագելը, համարվել է լուսաբեր, այգաբեր, առավոտյան աստղ, իսկ մինչ արևի մայր մտնելը՝ Գիշերավար: Նա դիտվել

---

[1] *Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 269:*

[2] **Дьяконов И. М.** *Ассиро-вавилонские источники по истории Урарту (Вестник древний истории, 1951, N 2, с. 290, прим. 2).*

[3] **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Թեգարամա (Թոգարամա) քաղաքի տեղորոշման հարցի շուրջ [Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 2011, N 4, էջ 8]: Մ. Գավուքճյանի կարծիքով՝ «Արամէ-ն (Արմէ-ն) բաղադրիչ մասն էր Արմէնի անուան եւ նշանակում էր «Արորդի՝ արեւորդի» (***Գավուքճյան Մ.,** *Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Ե., 2010, էջ 115-116):*

[4] **Մովսես Խորենացի,** *Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 42: Արամ անվան այլ մեկնաբանությունների մասին տե՛ս* **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Գեղամա երկիր, Ե., 2004, էջ 27, ծան. 20:*

[5] **Պետրոսյան Ս.,** *Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 54:*

[6] **Ղարագյոզյան Ա. Հ.,** *նշվ. աշխ., էջ 10:*

է նաև որպես արեգակ, արև, արևի ակն, արեգակն արդարության: Իր երկակի բնույթի պատճառով ընկալվել է որպես երկսեռ աստվածություն՝ Ափրոդիտե և Էրա անվանումներով[7]*:*

Ըստ առասպելական պատկերացումների՝ Արևի պաշտամունքի հետ առնչություն են ունեցել զույգ թևավոր արծվառյուծները, անգղագլուխ ու թևավոր մարդամարմին էակները (գրիֆոններ), որոնք համարվել են Լուսաբերի և Գիշերավարի խորհրդանիշները[8]*: Հայ իրականության մեջ Լուսաբերը և Գիշերավարը համարվել են ցերեկը և գիշերը արևին ուղեկցող պահապան ոգիներ*[9]*:*

Լուցիպերի (հմմտ. Lucifer) *արքայանունը հայերեն Լուսաբեր անվան՝ սեպագրով վկայված տարբերակն է: Այն կազմված է հայերեն լոյց «կրակ կամ ճրագ վառել» և «բեր» (բերումն, ընթացք, գալուստ) բաղադրիչներից, որոնք համապատասխանաբար ծագում են հնդեվրոպական նախալեզվի* louk *և* bher *արմատներից*[10]*:*

Ըստ բիայնական քառանիստ կնիքներից մեկի վրա փորագրված «կիսասեպագիր և կիսամեհենագիր» գրության վերծանության՝ Argište *արքայանունը մեկնաբանվում է որպես* Ar *աստված*[11]*: Դա նշանակում է, որ այդ անունը կրող թագավորները համարվել են* Ar *աստծո կենդանի նմանակ*[12]*: Այդ մասին է վկայում Մուծածիրում եղած Արգիշթե I-ի՝ աստվածության խույրով և աջ ձեռքով օրհնող արձանը*[13]*: Երկնային լույսի (հիմքում՝ արև)* Ar/Ara *աստվածությունը հետագայում բիայնական դիցարանը գլխավորող* Arde (>Alde>* Halde / Halde) *աստվածն է*[14]*: Ընդ որում, Արդե նշանակել է արև, Արև աստվածություն, որի* sard *«արև» տարբերակն առկա է Սարդուրի արքայական անվան կազմում*[15]*:*

---

[7] *Տե՛ս* **Ղարագյոզյան Ա. Հ.**, *Վանի թագավորության արքայատոհմի ծագման հարցի շուրջ [Գավառի պետական համալսարան, գիտ. հոդ. ժողովածու (այսուհետև՝ ԳՊՀ) 2011(13), էջ 200-201]:*

[8] **Пиотровский Б. Б.** *Искусство Урарту, Л., 1962, с. 102-103.*

[9] *Տե՛ս* **Պետրոսյան Ս.**, *նշվ. աշխ., էջ 93:*

[10] *Մանրամասն տե՛ս* **Ղարագյոզյան Ա. Հ.**, *Վանի թագավորության..., էջ 200-202: Մ. Գավուքճյանի համոզմամբ՝ «Լուտիբրի (Լու-տիբիրա) նշանակում է «Մետաղագործ աստված» կամ «Մետաղագործ մարդ աստված», (Լուտիբիր) «Տապանակիր»* (**Գավուքճյան Մ.**, *նշվ. աշխ., էջ 118):*

[11] **Ղարագյոզյան Ա. Հ.**, *Գեղամա երկիր, էջ 24:*

[12] *Նույն տեղում: Ըստ Մ. Գավուքճյանի՝ «Ար-գիշ-տի նշանակում է «Ար-որդին-կենդանի, Արեւորդին կենդանի»* (**Գավուքճյան Մ.**, *նշվ. աշխ., էջ 136): Միևնույն ժամանակ, նա արքայանունը նույնացրել է հայկյան Արամայիսի անվան հետ. «Արգիշ(-տի)- Արմա(-իս) նշանակում է «Արորդի», այսինքն՝ «աստուածորդի» (Արդի-Ալդի-Խալդիի որդի)»* (**Գավուքճյան Մ.**, *նշվ. աշխ., էջ 127):*

[13] **Дьяконов И. М.**, *նշվ. աշխ. էջ 367:*

[14] **Ղարագյոզյան Ա. Հ.**, *Հալդե դիցանվան ստուգաբանության շուրջ (ԳՊՀ, 2011(13), էջ 205-206):*

[15] **Марр Н. Я.** *Избранные работы, т. V, М.-Л., 1935, с. 124. Ուշագրավ է այն դիտարկումը, ըստ որի, «Արդի անվան Սարդի ձևը համապատասխանում է Արայան Արա եղող Կարդոսին»*

Հայաստանի կիրառական արվեստի հուշարձանների վրա արևը պատկերվել է կենդանիների ու թռչունների միջոցով[16]: Բիայնական որոշ արքայանուններ նույնպես կապված են կենդանիների ու թռչունների անվան հետ և խորհրդանշել են Արևը՝ որպես գլխավոր աստվածություն:

Նկատի ունենալով հնդիրանական ցեղերի լեզվական ազդեցությունը «ուրարտերենի» վրա, կարելի է ասել, որ հին իրանական *aspa-*ից *(նշանակել է ձի) ունենք* Išpuine *թագավորական անունը[17]: Ծիսական ձին, տիեզերական ծառը, որին կապված է ձին և նրանց հովանավոր աստվածային երկվորյակները մտնում են այն առասպելական պատկերացումների մեջ, որոնք առկա էին ընդհանուր հնդեվրոպական կրոնում[18]: Հիշատակելի է, որ Վանի թագավորութ- յան ժամանակաշրջանում Արևաստծու խորհրդանիշ- ներն են եղել արևի թևավոր սկավառակը, թռչունը և ձին (նաև՝ թևավոր)[19]: Հետևաբար,* Išpuine *(հմմտ. հունարեն* A((a(((, Ispakai*)[20] թագավորական անունը նույնպես ըմբռնվում է որպես Արևաստված:*

Հին Հայաստանում եղել են բազմանիստ կնիքներ, որոնց վրա պատկերված է ձի՝ գլխին և մեջքին դեմառդեմ կանգնած թռչուններով: Հին խորհրդանշել է Արևը[21]: Արտաշեսյան արքաների թագի կենտրոնում պատկերված է եղել արև, իսկ աջ և ձախ կողմերում՝ դեմ դիմաց կանգնած թռչուններ, որոնք խորհրդանշել են Լուսաբերին և Գիշերավարին[22]: Այդ փաստը վկայում է ոչ միայն արքայատոհմերի, այլև խորհրդանիշների ժառանգականության մասին:

Ժամանակին պատմական հիմնավորվածությունից զուրկ են համարվել Պ. Կրեչմերի եզրակացությունները, որոնք հենվում են լեզվաբանական տվյալների և հատկապես հատուկ անունների զուգորդման վրա: Չի ընդունվել ուրարտական Մենուա թագավորի անվան համադրումը հունական լեգենդների Մինոսի, ինչպես նաև Մենուա անվան կապը փոքրասիական (փռյուգիական) լուսնի աստված Մենի անվան հետ[23]: Նկատենք, որ «...լեզվական ժառան- գությունը նույնպես ցույց է տալիս տվյալ ժողովրդի կապը էթնիկական այլ խմբերի հետ, որոնք պատմության ավելի վաղ փուլերում եղել են այդ

(**Գավուրճյան Մ. Ս.,** *Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրէալ, 1980, էջ 111): Ի դեպ՝ անընդունելի է, իհարկե, Շեֆտելովիցի՝ Սարդուրի անվան բացատրությունը, որպես իրանական* saradara (**Грантовский Э. А.** *Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, с. 129):*

[16] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 269:*

[17] *Համանման կարծիք հայտնել է Ս. Պետրոսյանը (տե՛ս* **Պետրոսյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 58-59):*

[18] *Տե՛ս* **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Գեղամա երկիր, էջ 26, ծան. 10:*

[19] **Պետրոսյան Ս.,** *նշվ. աշխ. էջ 48:*

[20] **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч.** *Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тбилиси, 1984, с. 550.*

[21] **Խաչատրյան Ժ.,** *Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ (Լրաբեր, 1981, N 2, էջ 65):*

[22] *Տե՛ս* **Պետրոսյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 36: Մ. Գավուրճյանի համոզմամբ՝ Արայեան Արան (Կարդոսը) Սարդուրի Ա-ն է, իսկ նրա որդի Անուշավանը՝ Իշպուինին-* (**Գավուրճյան Մ.,** *նշվ. աշխ., էջ 122):*

[23] **Пиотровский Б. Б.** *Ванское царство, М., 1959, с. 48.*

նույն լեզվի (կամ նրա նախորդի) կրողներ, բայց այդ կապը անպայման ուղղակի չէ...»[24]*: Կրեչմերի տեսակետը կարելի է համարել հավանական, մանավանդ որ Արդե աստծո անվան հետ է կապվում ուրարտացիների Լուսնի աստվածության* Šelardi *անունը: Այն նշանակել է Գիշերվա արև*[25] *կամ Գիշերվա լուսատու*[26]*, իսկ իմաստաբանորեն՝ Արևի գիշերվա աչք, քանի որ այն պատկերացումը, թե Արևը և Լուսինը արևային աստվածության աչքերն են, հին Արևելքի կրոնում հանդիպում է ամենուրեք*[27]*:*

Մենուա անունը մեկնաբանվում է նաև հ.-ե. *mvnu- *մարդ տերմինով: Ընդ որում, հնարավոր է համարվում նաև մտածող բացատրությունը*[28]*:*

Menua *անվան մեջ* me*-ից հետո* i *հնչյունի առկայությունը մատնանշում է, որ այդ անունը պետք է ընթերցել* Minua[29]*: Այդ ան- վան մեջ կարելի է տեսնել հնդեվրոպական ծագում ունեցող* men/<min/man-a *բառարմատը, որն ունի իմաստաբանական ընդարձակ զարգացում*[30]*: Նկատի ունենալով այն իրողությունը, որ բիայնական բոլոր թագավորների անունները խորհրդանշել են Արևը, Մենուա անունը կարելի է կապել հայերեն ման (պտույտ, շրջան, ոլորք)*[31] *բառի հետ, որի իմաստները բնորոշ են արևի սկավառակին: Դրանք տեսանելի են ման գալ («շրջիլ, պտտիլ, որոնել»)*[32] *բառակապակցության մեջ և բնութագրում են արքայական անունը՝ որպես կենդանի արևի սկավառակ:*

Հնախոսությունից հայտնի է, որ բոլորակը հավասար է գնդի և սկզբնապես նշանակվել է երկինք տերմինով, իսկ յուրաքանչյուր բոլորակ

---

[24] **Дьяконов И. И.** *Предыстория армянского народа, Е., 1968, с. 8.*

[25] **Ղափանցյան Գ.,** *Ուրարտուի պատմություն, Ե., 1940, էջ 46:*

[26] **Меликишвили Г. А.** *Урартские клинообразные надписи, М., 1960, с. 417.*

[27] **Пиотровский Б. Б.** *История и культура Урарту, Е., 1944, с. 278. Գ. Բ. Ջահուկյանը* Selardi *անունը հակված է մեկնելու որպես «ուժ, իշխանություն, աստված, աստվածուհի» [(***Ջահուկյան Գ. Բ.,** *Հայկական շերտը ուրարտական դիցարանում, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1986, N 1, էջ 49]: Մեղարդ (Լուսին) բառի գոյությունը հայերենում ենթադրում է, որ Ուրարտուի Լուսնի աստվածության անվան «... առաջին վանկն ավարտվել է ոչ թե* **i**, *այլ* **e** *ձայնավորով, քանի որ ուրարտերենում* **e***-ով կամ* i*-ով ավարտվող վանկին հաջորդող* **e** *կամ* ***i*** *հնչյունը սովորաբար նույնանում էր վանկն ավարտող ձայնավորի հետ» (***Հմայակյան Ս. Գ.,** *Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 49):*

[28] **Պետրոսյան Ա.,** *Ուրարտուի վերնախավի էթնիկական պատկանելության խնդիրը (ՊԲՀ, 2005, N 3, էջ 212:*

[29] **Пиотровский Б. Б.** *Ванское царство, с. 63, прим. 10.*

[30] **Марр Н. Я.,** *նշվ. աշխ., էջ 17, 20):*

[31] **Աճառյան Հր.,** *Հայերեն արմատական բառարան, հ. III, Ե., 1977, էջ 249:*

[32] *Նույն տեղում:*

առարկա (անիվ, ձու, կամար, թաղ) նշվել է բառով, որը նշանակել է երկինք: Ընդ որում, երկինքը և արևը ներկայացվում էին նույն բառով[33]*:*

Տեղական խոսակցական լեզվում Rusa *անունը արտասանվել է* Ursa *(<*Orsa *հմմտ. անգլ.* horse*): Այն գալիս է իրանական աղբյուրից՝* rošan *«լուսավոր» հիմքից: Լույսը, օրը կապված են արևի՝ հատկապես արշալույսի հետ: «Արշ/ա/ (վաղորդյան արև)» բառը (նշանակել է նաև ձի) տեսանելի է* I-u-ar-ša *(Յարշա) դիցանվան և* Ursa *թագավորական անունների մեջ*[34]*: Հիշատակելի է, որ հայերի մոտ արևագալն ընկալվել է որպես ձիու և ոչ թե արևի ժամանում՝ արտահայտելով արշալույս իմաստը*[35]*:*

Erimena *թագավորի անունը հայերի արմեն անվան «ուրարտական» տառադարձություն է*[36]*: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ անունը նշանակել է Արևորդի: Այն կազմված է* ar/er *«արև» և* men<min/man-a *«որդի» (*resp*. երեխա կամ հոգնակի՝ երեխաներ)*[37] *բաղադրիչներից:*

Թագավորի անձի աստվածացման և Արևաստծո հետ նրա համադրման շնորհիվ արքայատոհմի շառավիղները, բնականաբար պետք է համարվեին Արևաստծո զարմ, սերունդ: Դրան նշանակությամբ համապատասխանում է արմեն ցեղային անվանումը:

Հայկական լեռնաշխարհում միջին և վերին պալեոլիթի սահմանագծում ձևավորված մայրական տոհմական համայնքը հիմնված էր մայրական իրավունքի և տոտեմական գաղափարաբանության վրա[38]*:*

Այս փուլում ծագում և ձևավորվում է Մեծ մայր հասկացությունը և նրա պաշտամունքը՝ որպես տոհմի հովանավոր աստվածություն: Որպես պատվատիտղոս՝ այն կրել է սիրո, պտղաբերության, արգասավորության և

---

[33] **Марр Н. Я.,** *նշվ. աշխ., էջ 401, 402, 420:*

[34] *Տե՛ս* **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Գեղամա երկիր, էջ 25-26, ծան. 9:*

[35] *Տե՛ս* **Марр Н. Я.,** *նշվ. աշխ., էջ 104: Որոշ հետազոտողներ (Լենորման, Ստ. Պալասանյան, Մ. Հասրաթյան, Մ. Գավուքճյան) Ռուսա I -ին կամ Ռուսա III-ին համարել են հայկական ավանդության Հրայան: Սակայն Հրայան (իմա՛ «…ար.<հայ. հուր+աչք բառերից, իբրև «հրեղեն աչքեր ունեցող» (***Աճառյան Հր.,** *Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Ե., 1946, էջ 109) ստուգաբանորեն կապ չունի Ռուսա անվան հետ:*

[36] *Տե՛ս* **Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ.,** *Ուրարտու-Հայաստան, Ե., 1989, էջ 148:*

[37] **Марр Н. Я.,** *նշվ. աշխ., էջ 17-18, 20:*

[38] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 92: Ուշագրավ է, որ Հայաստանի նեոլիթյան ժամանակաշրջանի (մ.թ.ա. VII-IV հազ.) հուշարձաններն աղերս ունեն Վերին Միջագետքի և Միջերկրականի նեոլիթյան հնավայրերի հետ (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 103): Հիշատակելի է, որ ըստ գենետիկական հետազոտությունների «Հայկական պոպուլյացիաներում գերիշխում են նեոլիթյան ծագում ունեցող տոհմագծեր» [***Եսայիսկոպոսյան Լ.,** *Հայերի ծագումնաբանությունը. ժամանակակից գենետիկական հայացք (տե՛ս Միջազգային գիտաժողով, Հայ- կագունիներ, առասպել և պատմություն, զեկուցումների դրույթներ, Ե., 2012, էջ 49)]:*

մայրության դիցուհի, հայոց աշխարհի հովանավոր, Մեծ տիկին հորջորջվող Անահիտ աստվածուհին, որի անունով անվանակոչվել է Արուսյակ մոլորակը[39]: Հայերենի որոշ բարբառներում Մեծ մայր իմաստն արտահայտել է այա (Խարբերդ և Ղարաբաղ[40], Ալաշկերտ և Մուշ[41]) անվանումը: Հավանական է, որ նախապես այա կոչվել է Արուսյակը, որը համարվել է արշալույսի դիցուհի: Այա աստվածուհու անունը վկայվել է Միհերի դրան արձանագրությունում[42]: Այդ անունը աղերս ունի բաբելական Աիա (Աա) աստվածուհու անվան հետ[43]: Նրան կարելի է համադրել հունական Էոս (Արշալույսի աստվածուհի) դիցանունը[44]: Ակնհայտ է նաև կապը Այա աստվածության անվան և Կողբիսի հնագույն (ĩ(((էա[45] երկրանվան, ինչպես նաև Թեսալիայում գտնվող համանուն քաղաքանվան միջև:

Հարկ է նշել, որ «… հուն. բառը կապվում է լատ. նույնանիշ auia-ի հետ և բխեցվում է հ.-ե. *auo- «պապ» հիմքից՝ որպես սիգական կազմություն. այս հիմքից է ծագում հայ. հաւ «պապ» բառը: Մյուս կողմից՝ այն կարող է կապված լինել հայերի անվան հետ՝ հ-ի բար-

---

[39] Տե՛ս **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Նաիրի, Բիայնա, Ուրարտու և Հայք երկրանունների ստուգաբանության շուրջ (Լրաբեր, 2012, N 2-3, էջ 53):*

[40] Տե՛ս **Աճառյան Հր.,** *Հայերեն գաւառական բառարան, թ., 1913, էջ 89:*

[41] *Այդ փաստը մեր խնդրանքով արձանագրել է պատմաբան Ն. Խաչատրյանը Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի Աստղաձոր, Զոլաքար, Վաղաշեն և Գետաշեն գյուղերի հնաբնակներից, որոնք գաղթել են Ալաշկերտից և Մուշից:*

[42] Տե՛ս **Հմայակյան Գ. Ս.,** *նշվ. աշխ., էջ 11:*

[43] **Ղափանցյան Գ. Ա.,** *Ուրարտուի պատմություն, Ե., 1940, էջ 48: Գ. Ա. Ղափանցյանն Այա աստվածությանը վերագրել է շումերաաքքադական ծագում (***Капанцян Г. А.** *Об урартском божестве Шебиту (ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1964, N 11-12, էջ 17): Այա աստվածությունը ունեցել է հնդեվրոպական ծագում, որովհետև նրա պաշտամունքի վայրերը հիմնականում գտնվում էին հնդեվրոպական նախահայրենիքի սահմաններում: Հետաքրքիր է, որ Մեծ մայր իմաստը պահպանվել է հունարենում՝ γιαγια/www.mtranslate/russian-greek. html/ (=հին հուն.* γαῖα, γῆ) *ձևով [***Дворецкий И. Х.** *Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, с. 46]: Այդ փաստը վկայում է, որ դիցանվան մյուս զուգահեռ ձևերը ունեցել են նույն նշանակությունը: Հին դարերում Անահիտի (իմա՛ Արուսյակ) պաշտամունքը մեծ ժողովրդականություն է վայելել նաև Փոքր Ասիայում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 902): Հետևաբար, կարելի է ենթադրել, որ նրա պաշտամունքը սե ռում է Հայկական լեռնաշխարհից:*

[44] *Ըստ հունական առասպելաբանության՝ Էոսը* (Ἠως) *արևի աստվածուհի Հելիոսի և լուսնի աստվածուհի Սելենեի քույրն էր: Հոմերոսը նրան բնութագրում է որպես վարդամատ, զաֆրանագույն (կարմրադեղին) հագուստով: Առասպելներում պատմվում է Օրիոնի, Կեփալոսի և ուրիշների նկատմամբ նրա տածած սիրո մասին: Միրահարվելով հրաշագեղ Տյուփոնին՝ Էոսը, թախանձելով նրա համար, Զևսից ստացել է անմահություն, սակայն մոռացել է կանխապայման դնել հավերժ երիտասարդությունը: Երբ Տյուփոնը ծերացավ և դարձավ զառամյալ, վերածվեց կնճիթավոր ճպուռի (տե՛ս Большая Советская Энциклопедия, т. 49, второе издание, том подписан к печати 13 ноября 1957 г., с. 112).*

[45] **Дворецкий И. Х.,** *նշվ. աշխ., էջ 46:*

բառային անկմամբ կամ սեպագրային անտեսմամբ… այս դեպքում հայ բառի հետ միասին այն իրոք կարող է ծագել հ.-ե. *poti – «տեր» արմատից՝ – ia ածանցով և նշանակել «տիրուհի»: Հայկի անունը՝ որպես հայերի էպոնիմ կարող է նույնպես ծագել այս հիմքից [հմմտ. Ainaue «(հ)այերի (աստված)»], և Aia-ն (*Հայա) կարող էր լինել Հայկի կինը»[46]:

Վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանում (մ.թ.ա. III հազ. վերջ, հայրիշխանական մեծ համայնքի կազմավորմամբ, այա անունը, պահելով Մեծ մայր նշանակությունը, կորցնում է իր գործառույթը: Մ.թ.ա. VII դ. Ասորեստանի թագավոր Ասարհադոնի կողմից Շամաշ աստծուն արված հարցումներում այա-ն հիշատակվել է Յայա ձևով՝ որպես Ռուսա II (մ.թ.ա. 685-645), շրջապատի կողմից նրան տրված պատվանուն[47]: Այն նշանակել է տեր (բառացի՝ տեր իմ), թագավոր (= Արևաստված): Սակայն Ալաշկերտի և Մուշի բարբառներում պահպանվել է նրա նախնական նշանակությունը (հմմտ. [ի] յայա < ի այա, տառացիորեն՝ «իմ մեծ մայր»): Այա անվան՝ Ռիգվեդայում վկայված Āyu տարբերակը ենթադրում է նաև *Այո ձևի գոյությունը, որը հ հնչյունի հավելմամբ կարող էր դառնալ *հայո, որից էլ ծագում է հայ կամ խայ ցեղային անվանումը[48]: Հայերի ամուսնական-ընտանեական կապերի դիտարկումից երևում է, որ գերդաստանի նահապետը մեծ հարգանք է վայելել: Նա համարվել է տան «թագավորը», որի կարգադրություններն անմիջապես կատարվել են[49]: Հայաստանի գյուղական վայրերում այդ իրողության արտահայտությունն է «տանտիկնոջ կողմից իր ամուսնուն, այսինքն՝ ընտանիքի նահապետին մեր հայը կամ մեր խայը կոչելը»[50]:

Հետևաբար, կարելի է արձանագրել, որ Վանի թագավորության արքայատոհմը ունեցել է հայկական ծագում: Բիայանական թագա-

---

[46] **Զահուկյան Գ. Բ.,** *Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 54:*

[47] *Տե՛ս* **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Նաիրի, Բիայնա, Ուրարտու և Հայք …, էջ 56, ծան 42: Ն. Ադոնցը գրում է. «Ռուսա II-ը կոչվում է այլ կերպ՝* **Iaia** *և երրորդ անուն էլ ուներ, որ տեքստում ջնջվել է»* (**Ադոնց Ն.,** *Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 194, ծան. 2):*

[48] *Պ. Կրեչմերը առաջինը լեզվաբանորեն հիմնավորեց այն դրույթը, որ* **Hayasa** *անունը բաղկացած է* **Haya** *կամ* **Hayo** *հիմքից և* **sa** *վերջավորությունից, որը տարածված է Փոքր Ասիայի տեղանուններում և կապվում է խեթա-լուվիական լեռնաշխարհի հետ: Պ. Կրեչմերի այս եզրակացությունը զարգացվեց և խորացվեց Ն. Ադոնցի, Գ. Ղափանցյանի և այլ հայագետների ուսումնասիրություններում (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 190-191):*

[49] *Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. IV, Ե., 1973, էջ 48:*

[50] **Հարությունյան Բ. Հ.,** *Հայկի և Բելի պատմության, հայ ժողովրդի կազմավորման, ս>յ հնչյունափոխության և մի քանի այլ հարցերի շուրջ (տե՛ս Միջազգային գիտաժողով: Հայկազունիներ, առասպել և պատմություն …, էջ 22-23: Հատկանշական է, որ վրացերենում տոհմանունը կամ ցեղանունը, որ վաղ շրջանում տրվել է ընտրվող ռազմական առաջնորդին, հետագայում անցնում է թագավորին (***Ղափանցյան Գ. Ա.,*** *Հայոց լեզվի պատմություն, Ե., 1960, էջ 10):*

վորությունը համարվել է իշխող արքայական տոհմի (կամ ցեղի) երկիր: Թագավորական իշխանությունը եղել է ժառանգական, և բոլոր դեպքերում էլ գահն անցել է հորից որդուն[51]: Նկատելի է, որ (h)այա-ն առկա է Հայասա անվան հիմքում: Դա վկայում է, որ Վանի թագավորները մ.թ.ա. XV-XIII դդ. Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող Հայասա թագավորությունում իշխող արքայատոհմի շառավիղներն են:

ОТРАЖЕНИЕ МИФОЛОГИЧЕСКИХ ПРЕДСТАВЛЕНИЙ В ИМЕНАХ ПРАВИТЕЛЕЙ ВАНСКОГО ЦАРСТВА

КАРАГЁЗЯН А. А.

Резюме

В странах Древнего Востока обожествление царей было обычным явлением. В составе их имен упоминалось ***Солнце*** как символ верховной власти. Свидетельства о культе ***Солнца*** наличествуют и в биайнских царских именах. Представители царского рода считались потомками бога Солнца либо его племенем, что в смысловом плане соответствует этническому названию ***армен***. На стыке среднего и верхнего палеолита на Армянском нагорье формируется культ богини матери как покровителя рода. В некоторых армянских диалектах понятие богини матери выражалось названием **aia.** С формированием патриархальной большой общины **aia** теряет свою функцию. Название **aia** засвидетельствовано как эпитет Русы II (685-645 до н. э.) в форме **Iaia** и означало господин (букв. мой господин, царь). Вариант Āyu названия **Aia,** упоминавшегося в Ригведе, предполагает также существование формы **Aio**, которые с прибавлением **h** могли стать ***haio** или **haia.** Из этих форм образуется этноним **hai** или **<u>h</u>ai.** Очевидно, что **h(aia)** наличествует в основе названия страны **Haiaša**. Это явствует о том, что правители Ванского царства являлись потомками царского рода, правившими в **Haiaša** в XV-XIII вв. до н. э.

[51] **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Վանի թագավորության արքայատոհմի ծագման հարցի շուրջ, էջ 202:*

THE REFLECTION OF MYTHOLOGICAL IDEAS IN THE ROYAL NAMES OF VAN KINGDOM

A. GHARAGYOZYAN

Abstract

In the countries of Old East, the deification of kings was a usual phenomenon. The Sun was in the origin of their names as a symbol of supreme power. The records of the Sun worship were also reflected in royal names of Biayna. The offspring of the royal dynasty were considered to be the descendants of the God of Sun. The meaning of their names thus corresponded to the name of Armen tribe.

The concept of goddess Great Mother as a protector of the tribe dominated the Armenian highlands. In some Armenian dialects, the term *aya* corresponded to the meaning of Great Mother. As a large patriarchal community was formed, *aya* lost its function. It started to denote the title of Rusa II (B.C. 685-645) and meant *lord, king*. The version āyu which derives from the term *aya* brings forth the existence of the form *ayo* which could change into *hayo* or *haya*. The tribal name *hay* or *h̲ay* derives from these forms. It is worth mentioning that *(h)aya* is in the root of Hayasa. This comes to prove that the kings of Van were the descendants of the dynasty ruling in Hayasa.